




# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԳՂԵՐԸ

գոնազարդման գրքուկ



## ՈՎՔԵՐ ԵՆ ԱՆԳՂԵՐԸ


Անգղերը լեշակեր գիշատիչ թռչուններ են: Լեշակեր՝ նշանակում է մահացած կենդանիների մարմիններով սնվող: Սա նշանակում է, որ անգղերն անփոխարինելի ծառայություն են մատուցում մեզ՝ մարդկանց, և բնությանը՝ վերացնելով նեխող օրգանիզմներն ու դրանով կանխելով հիվանդությունների համաճարակները:

Աշխարհում կա 23 տեսակի անգղ:

Հայաստանում ապրում է 4 տեսակի անգղ՝ սպիտակագլուխ անգղ, սև անգղ, գիշանգղ և գառնանգղ:

Աշխարհում անգղերի բոլոր տեսակները խստորեն պահպանվում են: Հայաստանում 4 անգղերի տեսակն էլ գրանցված են «Կարմիր գրքում» (ինչի՞ մասին է Կարմիր Գիրքը):

Այն պատճառով, որ անգղերը սնվում են լեշով և մաքրում են երկիրը՝ Տիբեթում նրանք համարվում են Սուրբ թռչուններ:



## ՍԵՎ ԱՆԳՂ *aegyptius monachus*

Հայաստանի ամենամեծ գիշատիչ թռչունն է: Մի թևի ծայրից մինչև մյուս թևի ծայրը 3 մետր է (քանի՞ անգամ է այն մեծ քո թևերի բացվածքից): Սև անգղը նաև ամենուժեղն է բոլոր անգղերից: Նրա հայտնվելուն պես մյուս բոլոր անգղերը հարգալից կերպով տեղ են գիջում:


Չնայած նա ամենամեծն ու ուժեղն է, նաև միակն է, ով իր բույնը սարքում է ծառերի վրա:

Նրա նախընտրած ծառը գիհին է (հսկ դու գիտե՞ս ինչ տեսք ունի գիհու ծառը):

Ծառի կատարին տեղակայված հսկայական բույնը պաշտպանված չէ անձրևից և արևից: Ծնողները ձագին պաշտպանում են՝ լայն բացելով թևերը և ձևավորելով անձրևանոց:

Սև անգղը ամենաքիչ տարածում ունեցողն է Հայաստանում՝ այն բնադրում է միայն խոսրովի անտառ պետական արգելոցում (Փորձի՛ր քարտեզի վրա գտնել արգելոցի տեղը, քանի՞ կմ է հեռու այն քո տնից):

Այն ամենածանր թռչող թռչուններից է, քաշը 7-14 կգ է: Հին եգիպտացիներն ունեին անգղերի պաշտպանմունք: Օրինակ՝ եգիպտական Նեխբեթ (Nekhbet) անգղ-աստվածուհին







## ՄՈՐՈՒՔԱՎՈՐ ԱՆԳՂ ԿԱՄ ԳԱՌՆԱՆԳՂ *gypaetus barbatus*

Այս անգղը ստացել է իր անունը կտուցի լայնքով տարածված սև փետրափնջի պատճառով: Իսկ իրականում՝ դա մորուք չէ, այլ կատարում է արևապաշտպան ակնոցի դեր. կլանելով լույսը՝ թույլ չի տալիս, որ աչքը կուրանա:

Իսկ գառնանգղ կոչվում է, ըստ մի լեգենդի, համաձայն որի անգղը ժայռերում մոլորված գառնուկներին վախեցնում է և զցում ցած. բայց սա միայն լեգենդ է:


Գառնանգղը բացառիկ է, քանի որ սնվում է միայն ոսկորներով և ոսկրածուծով: Նրա ստամոքսը ունի շատ բարձր թթվայնություն, որը թույլ է տալիս արագ մարսել ոսկորները: (Էլ ի՞նչ կենդանի գիտես, որ յուրօրինակ կերակրացանկ ունի):


Գառնանգղը կարող է իր քաշի չափով ոսկորը բարձրացնել օդ և զցելով բարձրությունից ժայռերի վրա՝ կոտրել և արդեն փոքր կտորներով ուտել այն:


Մորուքավոր անգղը տարբերվում է այլ թռչուններից և կենդանիներից նաև իր մարմնի գույնով:

Մարմնի փետուրների գույնը սպիտակ է: Բայց մաքրելով իր փետրաշերտը մետաղով հարուստ հողով, կամ ջրով, այն ներկվում է ժանգոտ նարնջագույն:

Գիտնականները դեռ չեն բացահայտել՝ ինչու՞ է նա անում դա: Ասում են՝ որքան վառ է թռչնի գուևավորումը, այնքան ավելի մեծ հարգանք է վայելում մյուս թռչունների մոտ:










## ՄՊԻՏԱԿԱԳԼՈՒԽ ԱՆԳՂ

*gyps fulvus*



Սպիտակագլուխ անգղերը ապրում են ժայռերի վրա մեծ խմբերով: Խմբերով ապրելը հարմար է և ապահով: Երբ ծնողները բացակայում են, հարևան անգղերը պաշտպանում են ձագերին հնարավոր թշնամիներից:

Միասին ապրելը նաև հեշտացնում է սնունդ գտնելը: Սպիտակագլուխ անգղերը ժամերով սավառնում են օդում և դիտարկում: Լեշը տեսնելուն պես անգղը սկսում է արագորեն իջնել ներքև. ընկերները, նկատելով, նույնպես իջնում են և միասին սնվում: (Մտածի՛ր՝ էլ ինչ նպաստավոր պայմաններ կարող է տալ թռչուններին խմբերով ապրելը):

Հայաստանում հանդիպող ամենից մեծաքանակ անգղն է:

Շատ մաքրասեր թռչուններ են. հաճախ հավաքվում են ջրի մոտ լողանալու և փետրածածկը մաքրելու: Սպիտակագլուխ անգղի գլուխը փետրագուրկ է, ինչը հեշտացնում է գլուխը մաքրելը լեշով կերակրվելուց հետո:

50 անգղը միասին կարող են ոչխարին ուտել 20 րոպեում՝ թողնելով միայն կաշի և ոսկոր: (Հաշվի՛ր՝ որքան ժամանակում նույնը կարող է անել մեկ անգղը: Եվ մտածի՛ր՝ որքանով է լավ կամ վատ ունենալ մեծ քանակությամբ անգղ):

Քանի որ լեշ գտնելը այնքան էլ հեշտ գործ չէ, անգղերը գտնելուն պես այնքան շատ են ուտում, որ նույնիսկ կարող են մեկ-երկու օրով կորցնել թռչելու ունակությունը (Կարո՞ղ ես ասել՝ ինչու):

Հին եգիպտացիների համար անգղը սիրո և մայրության խորհրդանիշ էր, քանի որ նրանք ապրում են հավատարիմ զույգերով և շատ հոգատար են իրենց ձագուկների նկատմամբ:





## ԳԻՇԱՆԳՂ

*neophron percnoopterus*

Գիշանգղը Հայաստանում հանդիպող ամենափոքր անգղն է՝ թևերի բացվածքը՝ մինչև 175 սմ, իսկ քաշը՝ 2,5 կգ (Համեմատի՛ր սև անգղի հետ. քանի՞ անգամ է գիշանգղը փոքր):

Գիշանգղը Հայաստանի միակ չվող անգղն է (Ի՞նչ է նշանակում չվող): Պարզվում է, որ Գորիսում բնադրող գիշանգղերը ձմեռում են Սոմալի թերակղզում (Փորձի՛ր քարտեզի վրա գտնել թերակղզին և գծել այն ճանապարհը, որով Գիշանգղը կարող է ճամփորդել. սսեմ, որ անգղները չեն թռչում ջրի վրայով):

Գիշանգղը կարող է օգտագործել գործիքներ: Նրանք շատ են սիրում ուտել ջայլամի ձու: Բայց ամուր կճեպը կոտրել կտուճով չեն կարող: Գտել են մի հնարք. օգտագործում են սրածայր քարերը, ինչպես մենք՝ մուրճը, ձուն կոտրելու համար: (Գիտե՞ս այլ կենդանատեսակ, որ կարողանում է գործիք օգտագործել):

Բացի քարերից, նրանք օգտագործում են փայտիկներ՝ բուրդը հավաքելու և գլորելու համար՝ որպես բևի նյութ:

Բույնը կառուցում են ժայռերի խորշերում: Չույգերը միասին են ապրում ամբողջ

կյանքի ընթացքում: Միակն է Հայաստանի անգղերից, որ կարողանում է


միաժամանակ մեծացնել երկու ձագ: Կյանքի տարողությունը մինչև 30 տարի է:

Գիշանգղը՝ որպես աղբի և ուտելիքների մնացորդների հեռացնող, եգիպտական փարավոնների սիրելին էր. նրան նաև անվանել են «փարավոնների հավ»:

Նեոֆրոնը (Neophron) բացասական կերպար է Հունական դիցաբանությունում, որին Աստվածները վերածել են անգղի իր չար արարքների համար:







**Այստեղ կարող ես նկարել քո անգղին**

Սույն ծրագիրն իրականացվել է Արտաբույնք բնակավայրի երեխաների կողմից՝ «Համայնքային կամավորության միջոցով ուսումնառության կիրառումը Հայաստանի մի շարք փորձնական ուղղություններում» ծրագրի շրջանակներում՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և ԱՄՆ Անտառային ծառայության աջակցությամբ: Ստեղծման աշխատանքներին միացել են նաև Արարատ քաղաքի դպրոցի սաները:

Գրքույկը էջադրեց և կազմեց՝ Էմմա Խախանյանը:

